Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությունում փորձագետ ներգրավելու համար05.02.2020թ.

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությունում փորձագետ ներգրավելու համար:

Աշխատանքային պարտականություններն են՝

- Իրականացնում է համայնքների ղեկավարների աշխատակազմերի կադրային գործի վարման մեթոդական խորհրդատվություն:
- Տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն համայնքների ղեկավարներին աշխատակազմերի վերակազմակերպման, կառուցվածքային փոփոխության և լուծարման ժամանակ համայնքային ծառայության հետ կապված հարցերի վերաբերյալ:
- Մասնագիտական հսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի՝ պետության պատվիրակած լիազորությունների իրականացման նկատմամբ:
- Իրականացնում է ընտրությունների նախապատրաստական, կազմակերպման և անցկացման աշխատանքները:
- Նախապատրաստում է համապատասխան հիմնավորող փաստաթղթեր աշխարհագրական օբյեկտների անվնափոխման և անվակոչման վերաբերյալ:
- Իրականացնում է մարզի տարածքում համապատասխան մարզային ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքները:
- Վերլուծում է մարզի համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման իրավիճակը բացահայտում հրատապ հարցերը և դրանց վերաբերյալ նախապատրաստում առաջարկություններ:
- Իր իրավասության սահմաններում համապատասխան շրջաբերականներ է պատրաստում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ոլորտի հանրապետական գործադիր մարմնի տարածքային ծառայություններին տրամադրելու համար:
- Մարզի տարածքում կապի, էլեկտրամատակարարման, և գազամատակարարման խնդիրների առնչությամբ կազմակերպում է հանրապետական գործադիր մարմինների համապատասխան տարածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ Մարզպետի կողմից անցկացվող խորհրդակցությունների կազմակերպմանը, հավաքագրում և վերլուծում է ոլորտներին վերաբերող տեղեկատվությունը և ներկայացնում Մարզպետին:

- Սահմանված կարգով քննում է համայնքներից ստացվող բնակիչների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները, անհրաժեշտության դեպքում պատրաստում է տեղեկանքներ և գրություններ:
- Կազմակերպում է համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացի նախապատրաստական աշխատանքները:
- Կազմակերպում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության իրականացման ամենամյա աշխատանքային ծրագրի նախագծի կազմմանը և հսկողության իրականացմանը:
- Տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն իրենց սեփական և պետության պատվիրակած լիազորությունների իրականացման հարցերով:
- Խաղաղ ժամանակ զինվորական կոմիսարիատներին զորահավաքային աշխատանքների իրականացման գործում անհրաժեշտ աջակցություն է կազմակերպում:
- Կազմակերպում է տարածքային պաշտպանական միջոցառումները:
- Կազմակերպում է Բաժնի գործավարությունը և ներքին փաստաթղթաշրջանառությունը, պատրաստում է գրություններ, շրջաբերականներ, տեղեկանքներ, զեկուցագրեր:
- Կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1444-Ն որոշման պահանջներով սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցություն ստացող գազ և էլեկտրաէներգիա սպառող բնակիչ-բաժանորդների ցուցակների համադրումն ու դրանց ներկայացումը ,,ՀԷՑ,, ՓԲԸ՝ փոխհատուցման համար:

Փորձագետ ներգրավելու ժամկետն է 3 /երեք/ ամիս:

Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

1. ՀՀ քաղաքացի
2. Բարձրագույն կրթություն
3. Թիմում աշխատելու և թիմ ղեկավարելու փորձ
4. Ծրագրերի համակարգման ժամանակակից տեղական և համաշխարհային միտումների իմացություն
5. Օտար լեզուների իմացությունը կդիտվի որպես առավելություն

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

◆ դիմում ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարի անունով

◆ տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայական(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները բնօրինակների հետ միասին,

◆ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակների հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

◆ մեկ գունավոր լուսանկար 3X4 սմ չափսի,
◆ անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
◆ Հայտարարություն նշված սահմանափակումների բացակայության մասին՝
◆ պաշտոնից ազատվել կամ ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիառելու,
◆ օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու,
◆ օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու,
◆ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու,
◆ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

Քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ, կամ էլեկտրոնային փոստի միջոցով:
Աշխատավայրը՝ ք. Իջևան, Սահմանադրության 1
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 09:00 – 13:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2021 թ. փետրվարիի 9-ը ներառյալ:
Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀ Տավուշի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին (ք. Իջևան, Սահմանադրության 1 3-րդ հարկ, հեռ.՝ 0/263/4-22-20, էլեկտրոնային փոստի հասցեն՝ tavush.andznakazm@mta.gov.am):

ՀՀ Տավուշի մարզպետարանի
Գլխավոր քարտուղար պարոն
Արման Գևորգյանին

քաղաքացի ----------ից
(անունը, ազգանունը)

---------- հեռախոսահամարը

---------- էլեկտրոնային հասցեն

Դ Ի Մ ՈՒ Մ

Ծանոթանալով հայտարարությանը՝ ներկայացնում եմ որպես փորձագետ ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝

1. Անձնագրի (ՀԾ համարանիշ) _____ էջ.
2. Դիպլոմի (դիպլոմների) _____ էջ.
3. Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի _____ էջ.
4. Զինվորական գրքույկի (առկայության դեպքում) _____էջ.
5. Այլ _____ էջ:

Առդիր ----- էջ:

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____

(դիմումը ներկայացնելու ամսաթիվը)

Նախազգուշացված եմ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին: